Հավելված 1
Հաստատված է
վարչության նախագահի 23 հոկտեմբերի 2024 թվականի N 138-L կարգադրությամբ
Գործում է 01.11.2024թ.

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ/ԵՐԱՇԽԻՔԻ/ԱԿՐԵԴԻՏԻՎԻ ՀԱՅՏԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

1. **<u>Նախքան ֆինանսական վերլուծությունը պահանջվող փաստաթղթեր.</u>**
   1) Անհատ ձեռնարկատեր Վարկառուի/Գրավատուի/Երաշխավորի դեպքում՝
      - անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ,
      - Հանրային ծառայությունների համարանիշ կամ ՀԾՀ չունենալու վերաբերյալ տեղեկանք (կիրառելի է միայն ՀՀ քաղաքացիների համար),
      - Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից քաղվածք՝ գրանցման վերաբերյալ (պատճենահանված):
   2) Իրավաբանական անձ Վարկառուի/Գրավատուի/Երաշխավորի դեպքում՝
      - անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ՝ գործադիր մարմնի ղեկավարի, 10% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների/բաժնետերերի,
      - Կանոնադրությունը՝ վերջին խմբագրությամբ և բոլոր փոփոխություններով/լրացումներով:
   3) Ֆիզիկական անձ գրավատուի դեպքում՝
      - անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ,
      - ամուսնության վկայական և/կամ ամուսնական պայմանագիր, կնոջ/ամուսնու անձը հաստատող փաստաթուղթ՝ ֆիզիկական անձ գրավատուի ամուսնացած լինելու և գրավադրված գույքը ամուսնությունից հետո ձեռքբերելու պարագայում,
   4) Գործունեության իրականացման վայրի նկատմամբ սեփականության կամ վարձակալության իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենը:
   5) Գործունեության իրականացման համար անհրաժեշտ լիցենզիաների, սերտիֆիկատների և այլ փաստաթղթերի պատճենները
   6) Հարկային պետական ծառայություն ներկայացվող վերջին մեկ տարվա հաշվետվությունները:
   7) Բանկի համար ընդունելի ֆորմատով/տեսքով ներքին և հրապարակված ֆինանսական ամփոփ հաշվետվություններ, կազմակերպության առկա Հաշվեկշռային, Եկամուտ Ծախսերի և ֆինանսական հոսքերի վերաբերյալ, վերլուծական ժամանակահատվածի պատկեր ստանալու համար :
   8) Որպես գրավ առաջարկվող միջոցների (անշարժ և/կամ շարժական գույք և/կամ տրանսպորտային միջոց) սեփականությունը հաստատող փաստաթղթեր:
   9) Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող կազմակերպության կողմից տրամադրված գույքի գնահատման հաշվետվություն:
   10) Պայմանագրի/Մրցույթի հրավերի պատճենը կամ նախագիծը, որի կատարման համար անհրաժեշտ է Բանկային երաշխիքը (հիմնական պարտավորություն), միայն Բանկային երաշխիքների դեպքում:
   11) Պայմանագրի պատճենը կամ նախագիծը, որի պայմաններով նախատեսվում է ակրեդիտիվի թողարկումը կամ նախնական հաշիվ ապրանքագիրը, միայն Ակրեդիտիվների դեպքում:
   12) Երաշխիքի/ակրեդիտիվի նախագիծը (առկայության դեպքում), միայն Բանկային երաշխիքների և/կամ Ակրեդիտիվների դեպքում:

Սույն մասի 4)-12) ենթակետերում նշված փաստաթղթերը Հաճախորդը ներկայացնում է միայն Բանկի կողմից նման պահանջ ներկայացնելու դեպքում:

2. <u>Վարկային հայտի հաստատումից հետո պահանջվող փաստաթղթեր.</u>

1) Իրավաբանական անձ հանդիսացող Վարկառուի, Գրավատուի կամ Երաշխավորի.
   - ✓ իրավասու մարմնի որոշումը Բանկի նկատմամբ վարկային պարտավորություն ստանձնելու կամ գույքը գրավադնելու/երաշխավորություն տրամադրելու վերաբերյալ, և/կամ
   - ✓ Ձուտ/հաշվեկշռային ակտիվների մեծության վերաբերյալ տեղեկանք:

   Ներկայացվում են, եթե Վարկառուի, Գրավատուի կամ Երաշխավորի միակ մասնակիցը չի հանդիասանում իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարը՝ պահպանելով Բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենքի, Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին ՀՀ օրենքի պահանջները:
2) Անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ սեփականության իրավունքի ծագման հիմքեր:
3) Իրավասու մարմնի կողմից գրավադրվող գույքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք:
4) Անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ վարձակալության պայմանագրեր՝ սահմանափակումների վերաբերյալ տեղեկանքում նշումների առկայության պարագայում :

3. <u>Բանկի կողմից տրամադրվող ձևանմուշով լրացվող փաստաթղթեր</u>

1) Վարկի ստացման դիմում–հայտ:
2) «Անձնական և այլ տվյալների մշակման, տեղեկատվության հավաքագրման, օգտագործման և փոխանցման, ինչպես նաև «ԱՔՌԱ ՔՐԵԴԻԹ ՌԵՓՈՐԹԻՆԳ» ՓԲԸ-ից և իրավասու այլ պետական և ոչ պետական մարմիններից, կազմակերպություններից հարցումներ կատարելու վերաբերյալ» համաձայնություն և :

<u>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ</u>

1. Բանկը, անհրաժեշտության դեպքում, կարող է Հաճախորդից պահանջել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ:
2. Այն փաստաթղթերը, որոնցում պարունակվող տեղեկատվությունը Բանկը հնարավորություն ունի ստանալու իրեն հասանելի տեղեկատվական բազաներից, չեն պահանջվում Հաճախորդից (եթե առկա է Հաճախորդի (Անհատ ձեռնարկատերերի դեպքում) կամ Հաճախորդի իրավասու անձի համաձայնությունը այդ տեղեկատվությունը ստանալու և մշակելու վերաբերյալ):
3. Բանկը կարող է պահանջել օտարալեզու փաստաթղթերի նոտարական վավերացմամբ թարգմանություն:
4. Այն փաստաթուղթ(եր)ը, որոնք Հաճախորդը ներկայացրել է Բանկ և գործարքի իրականացման օրվա դրությամբ դրանք առկա են Բանկում և վավեր են, Բանկի հայեցողությամբ կարող են չպահանջվել:
5. Գրավի առարկային/երաշխավորությանը առնչվող փաստաթղթերը կիրառելի են միայն գույքով/երաշխավորությամբ ապահովված վարկերի դեպքում: